Հայաստանի Հանրապետություն
Արագածոտնի մարզի «Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

N 215

«Ֆոտոն» ՍՊԸ-ի
Տնօրեն Ն. Պետրոսյանին
ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 90036001
էլ.հասցե՝ ms.foton2014@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագրի ամբողջական կամ միակողմանի լուծման մասին

Հարգելի՝ պարոն Պետրոսյանին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 18.08.2023թ.-ին կնքված ՀՀԱՄ-ԱՇՏԱՐԱԿ-N2-ՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-6 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև Պայմանագիր/ շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված ապրանքները: Սակայն 24.11.2023թ.-ից խախտելով մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին և չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը հարկադրված է **2023թ.-ի դեկտեմբերի 05**-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:
Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **1320,4 (մեկ հազար երեք հարյուր քսան ամբողջ չորս)** ՀՀ դրամի և **880,2 (ութ հարյուր ութսուն ամբողջ երկու)** ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /ՀՀ ֆինանսների նախարարություն Հ/Հ900448000308/:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի Ս. Շահազիզի Անվան թիվ 2 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Ավոյան

05.12.2023թ.